ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 971-Ա « 13 » մարտի 2024թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.42 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի, աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի, «Երևանի հ.42 մսուր-մնակապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի գրությունները՝ «Երևանի հ.42 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ շենքի տեխնիկական վիճակի վնասվածության վերաբերյալ և հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 61-րդ հոդվածի դրույթները.

1.Ժամանակավորապես դադարեցնել «Երևանի հ.42 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գործունեությունը՝ 2024 թվականի ապրիլի 1-ից մինչև հիմնանորոգման աշխատանքների ավարտը:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Կազմակերպության տնօրենի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ